ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
2013 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....3

ԲԱԺԻՆ 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը.....3

ԲԱԺԻՆ 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 6

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները.....6

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 7

ԲԱԺԻՆ 3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի2013 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 9

3.1. Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....9

3.2. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....10

3.3. Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....11

3.4. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....11

3.5. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....12

3.6. Երևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ.....12

3.7. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ.....13

3.8. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ.....15

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը.....16

Եզրակացություններ.....17

Հղումներ օգտագործված նյութերին.....18

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2014 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2013-2015 թվականների ներդրումային ծրագրի 2013 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013-2017 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն]**:

ԲԱԺԻՆ 1.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, անվտանգության բարձրացման, էլեկտրատեխնիկական, հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների փոխարինման, հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենա-մեխանիզմների, մասնագիտական գործիք-

ների, համակարգչային տեխնիկայի և տնտեսական գույքի ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել 2 732,2[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- «Սևան» ՀԷԿ-ում՝ 96,0 մլն դրամ,
- «Հրազդան» ՀԷԿ-ում՝ 84,0 մլն դրամ,
- «Արգել» ՀԷԿ-ում ՝ 904,5 մլն դրամ,
- «Արզնի» ՀԷԿ-ում՝ 340,3 մլն դրամ,
- «Երևան» ՀԷԿ-1-ում՝ 1 232,2 մլն դրամ,
- ընկերության աշխատանքների կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 75,3 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2013 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը ըստ նպատակային ուղղությունների:

ԳՐԱՖԻԿ 1



Ինչպես երևում է գրաֆիկից ներդրումների մեծ մասը նախատեսվում էր ուղղել ՀԷԿ-երում էլեկտրատեխնիկական սարքավորումների՝ մասնավորապես

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

գեներատորների ստատորների վերականգնման, գրգռման համակարգերի արդիականացման և մաշված սարքավորումների փոխարինմանը: Ներդրումների 25%-ը նախատեսվում էր ուղղել հիդրոտեխնիկական կառույցների՝ մասնավորապես Հրազդան, Արգել, Արզնի ՀԷԿ-երի դերիվացիաների և Երևան ՀԷԿ-1-ի պատվարի շինությունների վերականգնմանը: Նախատեսվող ներդրումների 19%-ի հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումներ ուղղության շրջանակում 511,8 մլն դրամից 427,8 մլն դրամը նախատեսվում էր ներդնել Երևան ՀԷԿ-1-ի հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման ուղղությամբ: Այս ուղղությամբ մնացած 84,0 մլն դրամը նախատեսվում էր ներդնել Հրազդան ՀԷԿ-ի գնդաձև փականների ղեկավարման վահանակների արդիականացման ուղղությամբ: Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսվում էր ռելեական պաշտպանության սարքավորումների փոխարինում և ընկերության բնականոն աշխատանքների կազմակերպման նպատակով մեքենաների, մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և այլ գույքի ձեռք բերում:

ԲԱԺԻՆ 2.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2013 թվականի ընթացքում կատարել է 2 507,1 մլն դրամի ներդրումներ՝ նախատեսվածի 92%-ը, որի արդյունքում շահագործման են հանձնվել 926,0 մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են 32,4 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած 1 581,1 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեց-ված և ընկերության կողմից փաստացի իրականացված՝ ավարտված ներդրում-ների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3	4	5	6	7
1	Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	96,0	3,5%	6,0	0,6%	6,3%
2	Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	84,0	3,1%	2,0	0,2%	2,4%
3	Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	904,5	33,1%	799,4	83,4%	88,4%
4	Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	340,3	12,5%	0,6	0,1%	0,2%
5	Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	0,0	0,0%	31,8	3,3%	0,0%
6	Երևան ՀԷԿ-1-ի վերականգնում	1 232,2	45,1%	17,4	1,8%	1,4%
7	Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	75,3	2,8%	68,7	7,2%	91,2%
8	Այլ ներդրումներ			32,4	3,4%	
9	**Ընդամենը**	**2 732,2**		**958,4**		**35,1%**

Աղյուսակ 1-ից երևում է, որ ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է միայն 35,1%-ով: Ներդրումային ծրագրի միայն երկու՝ Արգել ՀԷԿ-ի վերազինման ու այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներին ուղղված ներդրումներն են ընկերության կողմից կատարվել նախատեսվածի մոտ 90,0%-ով, մնացած ուղղություններով կատարված ներդրումները չեն գերազանցում նախատեսվածի 7%-ը:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	**Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր**		**Ավարտված աշխատանքների մասով**	
		մլն դրամ	**%**	**մլն դրամ**	**%**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**198,6**	**7,8%**	**118,0**	**12,3%**
1,1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*11,7*		*6,0*	
1,2	*նյութական ծախսումներ*	*18,6*		*9,6*	
1,3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*40,1*		*40,1*	
1,4	*այլ**	*128,2*		*62,2*	
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**2 272,3**	**89,5%**	**771,7**	**80,5%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**68,7**	**2,7%**	**68,7**	**7,2%**
4	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**2 539,5**	**100,0%**	**958,4**	**100,0%**

*այս ծավալում ներառված են հիմնական միջոցների ձեռքբերման հետ կապված 32.4 մլն դրամի բանկային ծախսեր, որոնք ձևակերպվել են ընթացիկ ծախսերով:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2013 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 2 539,5 մլն դրամ գումար, որից մոտ 98,7%-ը հանդիսանում է կապիտալացված և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 1,3%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների 89,5%-ն իրականացվել է

այլ կազմակերպությունների միջոցով: Այս ծավալում ներառված են նաև մատակարարների կողմից մատակարարված և տեղակայված սարքավորումների արժեքը: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 7,8%-ը (այս ծավալում ընդգրկվել են նաև տեղակայման ենթակա սարքավորումների արժեքները, որը կազմում է ընդհանուր ներդրումների 1,6%-ը): Ներդրումների 2,7%-ը ուղղվել է տեղակայում չպահանջող հիմնական միջոցների ձեռքբերմանը:

ԲԱԺԻՆ 3.
«Միջազգային էներգետիկ» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ընկերության կողմից ներկայացված հաշվետվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Սևան», «Արգել», «Արզնի» և «Երևան-1» ՀԷԿ-երում 2013 թվականի ընթացքում կատարված ներդրումներին համապատասխան կապիտալացվել է 95,8 մլն դրամի վարկի տոկոսներ (29,9 մլն դրամը ավարտված ներդրումների մասով): Նշված տոկոսները սակագնով փոխհատուցման ենթակա չեն, քանի որ, համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 21-ի N462Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի, ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը: Այսինքն, 2013-2017 թվականների ընթացքում իրականացված ներդրումների նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների սպասարկման ծախսերի սակագնով փոխհատուցման հարցը արդեն իսկ կարգավորված է վերը նշված որոշմամբ:

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2013 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1. Սևան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

2013 թվականին «Սևան» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 96,0 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 305,2 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 6,0 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած՝ 299,2 մլն դրամի N1 և N2 գեներատորների ստատորների փոխարինման և գրգռման

համակարգերի արդիականացման ուղղությամբ կատարված աշխատանքները մնացել են անավարտ:

Ավարտված ներդրումները կատարվել են «Թիվ 4 դրենաժային պոմպի էլ. շարժիչի փոխարինում» (1,0 մլն դրամ) և «Խմելու ջրի ջրագծի վերանորոգում» (5,0 մլն դրամ) աշխատաքների ուղղությամբ, որոնք համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից[2]:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներդրումներ չեն ներառվել:

3.2. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

2013 թվականին Հրազդան ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 84,0 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրոտեխնիկական, հիդրոտուրբի-նային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների արդիականացման ու հիդրոտեխնիկական կառույցների վերականգնման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 19,1 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում 2,0 մլն դրամ ծավալով աշխատանքներ ավարտվել են: Մնացած 17,1 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ավարտված ներդրումները (2 մլն դրամ) ուղղվել են ՀԷԿ-ի նոր պահակատան կառուցմանը[2], որը նախատեսված չէր ընկերության ներդրումային ծրագրով, ուստի ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 2,0 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներդրումներ չեն ներառվել:

---

[2] Հաշվի առնելով, որ նշված ուղղությամբ՝ աշխատանքները համաձայնեցված են ընկերության 2014-2018թթ. ներդրումային ծրագրով, ուստի դրանց սակագնով փոխհատուցման հարցը կքննարկվի 2014 թվականին կատարված ներդրումները վերլուծելու ժամանակ:

3.3. Արգել ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

2013 թվականին Արգել ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 904,5 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրատեխնիկական սարքավորումների արդիականացման և հիդրոտեխնիկական կառուցվածքների վերակառուցման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 799,4 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ծավալում ՀԷԿ-ի N 1 և N 2 տուրբինային առանցքակալների վերակառուցման (61,4 մլն դրամ[2]) և ընկերության վարչական շենքի այգու ոռոգման համակարգի հիմնանորոգման (3,6 մլն դրամ) աշխատանքները, նախապես համաձայնեցված չէին և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, նշված ուղղությամբ 29,9 մլն դրամ ծավալով ներկայացվել է 2013 թվականի համար կապիտալացված վարկի տոկոսներ, որոնք ևս ենթակա են նվազեցման:

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված 799,4 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրում-ների ծավալում ներառվել է 704,6 մլն դրամը:

3.4. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

2013 թվականին Արզնի ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 340,3 մլն դրամ գումար ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքի վերակառուցման նպատակով:

Փաստացի կատարվել են 292,5 մլն դրամի աշխատանքներ, որից դերիվացիոն ջրանցքի վերակառուցման ուղղությամբ իրականացված 291,9 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ավարտված աշխատանքը՝ 0,6 մլն դրամ, ՀԷԿ-ի աղբի կուտակիչի պատրաստման աշխատանքն է[2], որը նախապես համաձայնեցված չէր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ այս ուղղությամբ իրականացված 0,6 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներդրումներ չեն ներառվել:

3.5. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

2013 թվականին Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ ներդրումներ նախատեսված չէին:

Փաստացի կատարվել են 31,8 մլն^2 դրամի ակումլյատորային մարտկոցների փոխարինման և աղբի կուտակիչի կառուցման աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքները ներառված չեն ներդրումային ծրագրում, դրանք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ այս ուղղությամբ իրականացված 31,8 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներդրումներ չեն ներառվել:

3.6. Երևան ՀԷԿ-ի վերականգնման աշխատանքներ

2013 թվականին Երևան ՀԷԿ-ի վերականգնման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 232,2 մլն դրամ գումար ՀԷԿ-ի էլեկտրոտեխնիկական, հիդրոտուրբի-նային, հիդրոմեխանիկական, օժանդակ, ռելեական պաշտպանության սարքավո-րումների փոխարինման և արդիականացման ու հիդրոտեխնիկական կառույցների վերակառուցման ուղղությամբ:

Փաստացի կատարվել են 977,6 մլն դրամի աշխատանքներ, որից 960,2 մլն դրամի աշխատանքները՝ ուղղված պատվարի շինությունների վերակահնգմանն ու հիդրոտուրբինի փոխարինմանը մնացել են անավարտ: Մնացած՝ 17,4 մլն դրամի աշխատանքներն ավարտվել են:

Ավարտված ներդրումների ծավալում 15,8 մլն դրամ ծավալով կատարվել է ՀԷԿ-ի ակումուլյատորային մարտկոցների փոխարինման աշխատանքը, որից 0,6 մլն դրամ նվազեցվել է՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Բացի այդ, 1,5 մլն դրամ ծավալով կատարվել է ՀԷԿ-ի աղբի կուտակիչի կառուցման աշխատանքը[2], որը նախապես համաձայնեցված չէր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ այս ուղղությամբ իրականացված 17,4 մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է 15,2 մլն դրամը:

3.7. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

2013 թվականին ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր ներդրումներ կատարել հետևյալ ուղղություններով՝

- մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում,
- ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների (շարժիչների, պոմպեր և այլն) ձեռքբերում,
- տնտեսական ապրանքների, գրասենյակային կահույքի և բջջային հեռախոսների ձեռքբերում,
- համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում,
- հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերում,
- հաշվապահական ծրագրի ձեռքբերում:

Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 55,2 մլն դրամ 1 հատ ավտոբուսի, 1 հատ բեռնա-մարդատար մեքենայի, 1 հատ ինքնաթափի և 1 հատ դիզելային գեներատորի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 2 հատ բեռնա-մարդատար մեքենաներ՝ 6,8 մլն դրամ և 7,3 մլն դրամ և 1 հատ միկրոավտոբուս 23,7 մլն դրամ ծավալներով: Փաստացի կատարված ներդրումների ծավալում 1 հատ 7,3 մլն դրամ ծավալով բեռնա-մարդատար մեքենան և 1 հատ 23,7 մլն դրամ ծավալով միկրոավտոբուսը[2] համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Բացի այդ, 0,8 մլն դրամ նվազեցվել է նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

Կայանների անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ 2013 թվականին ներդրումներ նախատեսված չէին: Փաստացի կատարվել է 9,3 մլն դրամի ներդրում, որոնք մնացել են անավարտ:

ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 9,4 մլն դրամ՝ ՀԷԿ-երում շարժիչների, պոմպերի և ներանցիչների ձեռքբերման և փոխարինման նպատակով: Փաստացի կատարվել է 8,0 մլն դրամի ներդրում, որն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ուղղությունում ներառվել են նաև խոտհնձիչ, էլեկտրական էներգիայի եռաֆազ հաշվիչներ, գազօջախ, հսկիչ-դրամարկղային մեքենաներ, մանեկի բանալիներ՝ ընդամենը 4,3 մլն դրամի և 1,7 մլն դրամի պոմպերի վերանորոգման աշխատանքներ, որոնք նախապես համաձայնեցված չեն եղել և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Տնտեսական ապրանքների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 0,6 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 0,7 մլն դրամի տնտեսական ապրանքներ: Նշված ծավալում 0,5 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել 1 հատ բարձր ճնշման սարք (HD 6/15 CX PLUS), որը համաձայնեցված չեր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 4,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 17,3 մլն դրամի ապրանքներ: Այս ուղղությամբ 13,3 մլն դրամի ներդրումները գերազանցում են նախապես համաձայնեցված ծավալը և նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Գրասենյակային գույքի ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 5,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 1,2 մլն դրամի գույք:

Հսկիչ-չափիչ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 0,8 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել

3,7 մլն դրամի սարքավորումներ: Այս ուղղությամբ 2,9 մլն դրամի ներդրումները գերազանցում են նախապես համաձայնեցված ծավալը և նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բջջային հեռախոսների ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 300 հազար դրամ: Փաստացի ձեռք են բերվել 55.9 հազար դրամի ընդհանուր արժեքով 2 բջջային հեռախոսներ:

Հաշվապահական ծրագրի ձեռքբերման ուղղությամբ 2013 թվականին ներդրումներ նախատեսված չէր: Փաստացի կատարվել են 3,5 մլն դրամի ներդրումներ, որոնք մնացել են անավարտ:

Արդյունքում, ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել են 54,5 մլն դրամի ներդրումներ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է 14,2 մլն դրամ:

3.8. Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները՝ 32,4 մլն դրամից 5,1 մլն դրամի ծախսերը իրենցից ներկայացնում են «Սևան», «Արգել», և «Քանաքեռ» ՀԷԿ-երում կատարված էլեկտրատեխնիկական սարքավորումների ձեռքբերման հետ կապված ֆինանսական ծախսեր, որոնք ենթակա են ներառման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Մնացած 27,3 մլն դրամի ծախսերը ներառված չեն ներդրումային ծրագրում և իրենց բնույթով չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրի տարրեր, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3
մլն դրամ

1	2013 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ	2 539,5
2	2013 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը	1 581,1
3	2013 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ	958,4
4	Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝	219,3
4.1	*Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը*	144,6
4.2	*Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ*	17,0
4.3	*Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված ներդրումներ*	0,6
4.4	*Վարկի տոկոսներ*	29,9
4.5	*Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ*	27,3
5	2013 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը	739,1

Եզրակացություններ

Ամփոփելով «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ-ի ներդրումային գործունեության արդյունքները հարկ է նշել, որ ընկերությունը ներդրել է ավելի քան 2,5 մլրդ դրամ ներդրումային ծրագրով նախատեսվածի 92%-ը: Շահագործման են հանձնվել 958,4 մլն դրամի աշխատանքներ, որից 704,6 մլն դրամը ուղղվել է Արգել ՀԷԿ-ի էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինմանը: Այս ենթաուղղությունը հիմնական ուղղություններով նախատեսված միակ աշխատանքն է, որն իրականացվել է ամբողջությամբ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի №459Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի աշխատանքային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 21-ի №462Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2013-2017 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Հաշվետվություն - « Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2014 թվականի փետրվարի 26-ի №2/9-008 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: